Ծառայությունների Մատուցման
Պայմանագիր
№ ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/ԱԽ-22

ք.Երևան

Կողմերը՝ «ԱՆԿՈՒՌ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Վաղինակ Հովհաննիսյանի, հետագայում Կատարող, մի կողմից՝ «ՀՀ ՆԳՆ նախարարություն»՝ ի դեմս՝ Խ. Իգիթյանի, հետագայում Պատվիրատու, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից տեղադրված ժամկետանց պարենային ապրանքի՝ (կենցաղային աղբ) վնասազերծում և/թաղում, քանակը 1810 կգ.:

1.2 Ծառայության արժեքը՝ 1կգ/ի համար կազմում է 50 ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:

2. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

2.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **90 500 (իննսուն հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ:

2.2 Վճարումները կատարվում են անկանխիկ եղանակով՝ ՀՀ դրամով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի 1.2 կետի համաձայն Կատարողին վճարել մատուցված ծառայությունների դիմաց հասանելիք գումարը:

3.2 Սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված վճարումների ժամկետների խախտման դեպքում Կատարողն իրավունք ունի պահանջելու տույժի վճարում՝ պայմանագրի արժեքի 0.5%-ի չափով յուրաքանչյուր օրվա համար, երեք ամսվա ընթացքում: Պատվիրատուի կողմից Կատարողին հասանելիք գումարի և տույժի չվճարման դեպքում Կատարողն իրավունք ունի կանգնեցնելու թափոնների ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դիմելու դատական ատյաններ:

4. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

4.1 Վիճելի հարցերի և տարաձայնությունների առաջացման դեպքում Կողմերը կգործադրեն բոլոր հնարավոր ուժերը դրանք բանակցությունների միջոցով լուծելու համար:

4.2 Վիճելի հարցերով համաձայնության չգալու դեպքում, Կողմերը կգործեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն:

5. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

5.1 Ֆորս-մաժորային հանգամանքների առաջացման դեպքում Կողմերը գործում են համաձայն այդպիսի հանգամանքների համար նախատեսված միջազգային կանոնների:

6. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մեկանգամյա ծառայության մատուցման համար:

6.2 Կողմերը իրենց պարտավորությունների չկատարման դեպքում, կամ եթե Կողմերից որևիցե մեկը ցանկանում է լուծել պայմանագիրը, ապա նա պետք է գրավոր ծանուցի այդ մասին մյուս Կողմին՝ այն լուծելուց մեկ ամիս առաջ:

6.3 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.12 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1, N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-67-89
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ **Խ. Իգիթյան**
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող/
(ստորագրություն)
Կ.Տ

Ստորագրող
ԽԱՉԱՏՈՒՐ ԻԳԻԹՅԱՆ
2014930309

2025-08-28 14:50:22 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Անկոլո» ՍՊԸ
հասցե՝ ք.Երևան Նանսենի 19/90
Բանկ՝ ՀԷԲ խորհրդային մ/ճ
Հ/Հ 163078304496
ՀՎՀՀ 00853446
Հեռ: 093 16-30-10
Էլ. Փոստ: zaven-hovhannisyan@mail.ru

Digitally signed by HOVHANNISYAN VAGHINAK 1102510793
Date: 2025.08.28 09:31:21 AMT

_____ **Վ. Հովհաննիսյան**
(ստորագրություն)
Կ.Տ)